Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի ապրիլի 18-ի N 6 - 4 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Գ. Ռ. Գալոյան
18 ապրիլի 2023 թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը մշակված է՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը, Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին

եվրոպական կոնվենցիայի, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի» ծրագրի շրջանակներում տպագրված նյութերը, համալսարանի կանոնադրությունը, համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարությունը և գործունեության ծրագիրը:

2. Հանձնաժողովի խնդիրն է էթիկայի կանոնակարգի գործադրմամբ նպաստել համալսարանի առաքելության իրականացմանը, ինչպես նաև համալսարանում բարեվարքության նորմերի պահպանմանը:

3. Շահերի համընկնման դեպքում հանձնաժողովի կազմը ենթակա է փոփոխման:

2. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4. Հանձնաժողովի նախագահին և անդամներին ռեկտորի ներկայացմամբ ընտրում է գիտական խորհուրդը և հաստատում խորհրդի բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համալսարանի աշխատողները և ուսումնառողները:

5. Հանձնաժողովն ընտրվում է 5 տարի ժամկետով, կազմի փոփոխությունը կատարվում է գիտական խորհրդի կողմից, բաց քվեարկությամբ: Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի 12 անդամից, որից 3-ը ուսանող են:

6. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

7. Հանձնաժողովի նախագահը.

1) կազմակերպում և համակարգում է հանձնաժողովի աշխատանքները.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) դիմում ներկայացրած անձից և շահագրգիռ անձանցից պահանջում է անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր, որոնք կպարզաբանեն

(կլուսաբանեն) էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը.

4) կազմում է նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման օրը, ժամը և վայրը.

5) որոշում է հանձնաժողովին ներկայացված հարցերի քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով անդամների հետ.

6) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը և հանձնաժողովի անունից կազմված գրությունը.

7) վարում է նիստը, իսկ բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:

8. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը ի պաշտոնե համալսարանի գիտական քարտուղարն է, որը.

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ այլ նյութերի, ինչպես նաև եզրակացությունների, պարզաբանումների և միջնորդությունների նախագծերի պատրաստումը.

2) հանձնաժողովի անդամներին, բողոք-դիմում ներկայացնողին և անձին, որին առնչվում է բողոքը, ծանուցում է (ողջամիտ ժամկետում) հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամի և վայրի մասին, արձանագրում է հանձնաժողովի նիստերը, արձանագրությունը ստորագրում նախագահի հետ միասին.

3) իր մոտ է պահում հանձնաժողովի արձանագրությունները:

3. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Հանձնաժողովը հաշվետու է գիտական խորհրդին:

10. Հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է մասնակից դարձնել շահագրգիռ անձանց, մասնագետների և այլն:

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

12. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

13. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են անդամների 2/3-ի մասնակցության դեպքում:

14. Հանձնաժողովի փաստաթղթերն ու եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

15. Հանձնաժողովի անդամն ունի անհատական կարծիքի իրավունք, որը կցվում է արձանագրությանը:

16. Էթիկայի հանձնաժողովին դիմում-բողոք գրելու իրավունք ունեն համալսարանի անձնակազմը և ուսումնառողները (ձևերը կցվում են):

17. Դիմում-բողոքը գրվում է հանձնաժողովի նախագահի անունով: Դիմում-բողոքին կցվում են ապացուցողական բազային վերաբերող փաստաթղթեր:

18. Դիմում-բողոքը էթիկայի հանձնաժողով անհրաժեշտ է ներկայացնել դեպքին հաջորդող օրվանից առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Դիմում-բողոքը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովը 7 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում և ներկայացնում կողմերին:

20. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները հաստատվում են համալսարանի գիտական խորհրդի նիստում:

21. Գիտական խորհուրդը կարող է հանձնաժողովի որոշումը վերադարձնել հանձնաժողովին կամ թողնել անփոփոխ:

22. Վերադարձնելու դեպքում պետք է նշել վերադարձի հիմքերը:

23. Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը դիմում-բողոքը մերժելու դեպքում պետք է ապահովեն (ներկայացնեն) համապատասխան հիմքեր:

24. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և եզրակացությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

25. Հանձնաժողովի եզրակացությունները 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում են շահագրգիռ անձանց:

4. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Էթիկայի հանձնաժողովը իրավասու է.

1) քննել իրեն ուղղված դիմումը.

2) քննվող հարցի վերաբերյալ կատարել եզրակացություններ և ընդունել որոշումներ.

3) կանոնակարգը խախտածների վերաբերյալ տալ էթիկայի և բարեվարքության հարցերով գնահատականներ և վարքագիծը փոխելու համար կատարել առաջարկություններ.

4) էթիկայի և բարեվարքության սկզբունքները խախտողից պահանջել գրավոր բացատրություն.

5) ապահովել քննության անկողմնակալությունը, բողոքողի կողմից հանձնաժողովի անդամին բացարկ հայտնելու իրավունքը.

6) կարգապահական տույժեր կիրառելու մասին առաջարկներ կատարելիս առաջնորդվել արդարության և պատշաճ ծանուցման սկզբունքներով.

7) կարգապահական տույժեր կիրառելու մասին առաջարկները կատարելիս հաշվի առնել խախտման բնույթը, դրա հետևանքները, հասարակական հնչեղությունը, խախտման հանգամանքները:

Ձև 1

ՀՊՏՀ էթիկայի հանձնաժողովի նախագահ

_____ -ին

(անուն, ազգանուն)

_____

_____

_____ -ից

(դիմողի ստորաբաժանման անվանումը, պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

Հասցե՝ _____

Հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն (տիկին) _____ ,

հայտնում եմ Ձեզ, որ _____ - ը

(անունը, ազգանունը)

խախտել է ՀՊՏՀ էթիկայի կանոնակարգի _____ կետով նախատեսված

(նշել կետը կամ կետերը)

էթիկայի կանոնները, որն արտահայտվել է հետևյալում (նշել օրը, ժամը, վայրը, հանգամանքները, ականատեսները, նկարագրել դեպքը, արարքը):

_____

_____

_____

Դիմող՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

« _____ » _____ 20 ____ թ.

Ձև 2

ՀՊՏՀ էթիկայի հանձնաժողովի նախագահ

_____ -ին

(անուն, ազգանուն)

_____

_____

_____ -ից

(դիմող ուսանողի ֆակուլտետը, կրթական ծրագիրը, կուրսը, անունը, հայրանունը, ազգանունը)

Հասցե՝ _____

Հեռ.՝ _____

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն (տիկին) _____ ,

հայտնում եմ Ձեզ, որ _____ - ը

(անունը, ազգանունը)

խախտել է ՀՊՏՀ էթիկայի կանոնակարգի _____ կետով նախատեսված

(նշել կետը կամ կետերը)

էթիկայի կանոնները, որն արտահայտվել է հետևյալում (նշել օրը, ժամը, վայրը, հանգամանքները, ականատեսները, նկարագրել դեպքը, արարքը):

_____

_____

_____

Դիմող՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

« _____ » _____ 20 ____ թ.